

Սակայն այդ փոյթ չէ մեզ, որպէս և եկեղեցու պատմադիտութեան հոգուն. մեզ զբաղեցնողը խորհրդի սրբազան վեհութիւնն է՝ իւր խորախորհուրդ էութեամբ:

Իսկ քեզ, հայ որեւոր, կ'մնայ չբաւականանալ ամանորիդ շեմքում միայն Փրկչի ծննդեան յիշատակութիւններով, այլ քեզ անհրաժեշտ է հետեւել երկնային հրեշտակների օրինակին—իջնելու մարդկութեան աղքատ և խեղճ ու կարօտ դասակարգի խրճիթները՝ բարոյական և նիւթական այցելութեան ու նրանց հետ փառաբանելու քոյզ Փրկչի հրաշափառ և մեծախորհուրդ վերանորոգիչ ծնունդը և Աստուածայայտնութիւնը:

Սիօն վարդապետ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ

Մի բաւական ընդարձակ յօդուած է նուիրուած այս հարցին Церк. Вѣст. № 50-ում, ուր հեղինակը ճգնում է առանձնապէս որոշել, թէ՛ ռալիսի շարժառիթներ են դեր խաղում մի կողմից յունական և ռուսական եկեղեցիների և միւս կողմից արեւմեան կաթոլիկ եկեղեցու մէջ՝ նրանց միացման խնդրի առթիւ: Յոյն եկեղեցու մէջ միացման ձգտումը միշտ էլ հանդէս է եկել, հեղինակի կարծիքով, ոչ թէ ձեական աւանդութեան ուժով, ոչ թէ յոյն կեանքի դժուար հանգամանքների ազդեցութեան ներքոյ, որոնք կապուած էին մուսուլման աշխարհի դարեւոր տիրապետութեան հետ, այլ այդ ձգտումը պայմանաւորուած է եղել դերազանցապէս կրօնական շարժառիթներով: Ապա հեղինակը նկարագրելով՝ թէ ինչպէս յոյն տարրը մինչև հիմա էլ սերտ կապերով կապուած է Օրթոդոքս եկեղեցու և նրա տիեզերական պատրիարքի հետ, ասում է «Յոյնի եկեղեցական ինքնագիտակցութիւնը պատկերացնում է Արևելքի և Արեւմուտքի կրօնական միութիւնը այն մտքով, որ պահպանուի օրթոդոքսութեան առաջնութիւնը և գլխաւորութիւնը, առանց այլադաւանութեան որեւէ զիջում անելու, առանց նուազեց-

ներքու և արտաքին ներքու օրթոդոքս հաւատքը, Ըստ էութեան բոլորովին այլ կերպ է ձևակերպուած կաթոլիկ Արևմուտքի միութեան ձգտումը, Հոռովը ծառայեցնում է այդ ձգտումը որպէս միջոց և զէնք պապութեան յատուկ նպատակներին հասնելու, այն է գաղտնաբար և խարդախութեամբ ենթարկելու իւր աղմկնիստ քառաւոր գերիշխանութեանը Արևելեան և աւտօքեֆալ եկեղեցիներին: Սլաւօն աշխարհը, որը վաղուց է, ինչ ապրում է կրօնաեկեղեցական հաղորդակցութեան մէջ Մայր-օրթոդոքսութեան հետ, միութեան խնդրումն էլ պաշտպանում է յունական եկեղեցու հայեցակէտը, հիմք ընդունելով սէր և եղբայրութիւն՝ նա ձգտում է մի հօտ գառնալ մի հովիւ Յիսուս Քրիստոսի առաջնորդութեամբ: Միացման խնդրի առթիւ ուսու եկեղեցու տեսակէտը միայն մի ձևական կողմով է տարբերում յունականից: Ռուսաստանը ինտենսիւ և կենդանի հետաքրքրութիւն չի ցոյց տալիս զէպի այդ խնդիրը, նա իրեն համարելով եկեղեցական ինքնագիտակցութեան կենդրոն՝ չի հետաքրքրում իւր արիւնահից և հաւատակից ժողովուրդների եկեղեցական կեանքով, այլ միայն երբեմն ողորմած հովանաւորութիւն է ցոյց տալիս: Հեղինակը այս անտարբերութիւնը անարդար է համարում, մանաւանդ որ ներկայ ժամանակում Արևելեան յոյն և սլաւ եկեղեցիների միջև ստեղծուել է պատերազմական դրութիւն Հոռովի բռնած բացարձակ և ազդեալի քաղաքականութեան պատճառով: Դպրօցներով, բարեգործական հաստատութիւններով, ժողովրդական հրատարակութիւններով և թերթերով՝ Հոռովը յարձակում է օրթոդոքս Արևելքի վրայ և պրօպէլիւաներ ձեռք բերելով՝ աշխատում է իրականացնել եկեղեցիների միութեան գաղափարը: Ահա այս ձևի ուժեղ կաթոլիկ պրօպականդ է մղւում և՛ Կ. Պօլսում և՛ Մոսկուայում: Այսպիսի հանգամանքներում օրթոդոքս Արևելքը լուսաւորուած խոր ինքնագիտակցութեամբ, բազմազարեան պատմութեամբ փորձուած՝ Արևմուտքի հետ իւր մղելիք կռուի մէջ պիտի աղաւնու միամտութեանը միացնի օձի խորամանկութիւնը և տայ կաթոլիկ ու բողոք-


քական եկեղեցիների միաբարական փորձերին այն պատասխանը, որ տրուեց 1902—1904 թուերին Երեւանի պատրիարք Յովակիմ III-ի նախաձեռնութեամբ Կ. Պոլսոյ պատրիարքարանի, Երուսաղէմի, Անտիոքի, Կիպրոսի, յունական թագաւորութեան, Ռումանիայի, Սերբիայի և Ռուսաստանի եկեղեցիների կողմից: Այդ պատասխանների մէջ օրթոդոքս եկեղեցու գլուխները բոլորը աղօթք են վերառաքում Բարձրեալին, որ եկեղեցիների միութիւնը գլուխ բերի, բայց մերժում են միանալ կաթոլիկ եկեղեցու հետ, որովհետեւ բացի դաւանական տարբերութիւնից՝ այդ եկեղեցու միաօնարական դործունէութիւնը զանազան վիրաւորական: Չերնոգորեան եկեղեցին կարեւոր է համարում պաշտպանել օրթոդոքսութիւնը «Արեւմտեան գայլերից», որոնք սուտ և ֆրասակար քաղաքականութիւն կրողներ են: Նրանք պատրաստ են զինուել յատկապէս «ուժեղ և հպարտ թշնամի» բողոքականութեան դէմ, որովհետեւ նա իւր վարդապետութեամբ թշնամի է օրթոդոքսութեան¹⁾: Բոլոր եկեղեցիները, ընդհանրապէս և ռուսաց եկեղեցին, հնարաւոր են համարում միութիւն առաջ բերել Անգլիական եկեղեցու և հնածէս կաթոլիկների հետ: Ի վերջոյ թերթը իւր ցաւն է յայտնում, որ Ռուսաց պետական դոման և պետական խորհուրդը իրենց ընդունած դաւանանքներին վերաբերեալ օրինագծով ուղղափառութեան ունեցած գերակշռութիւնից օտարահպատակներին զիջումներ են անում և դրանով դաւանաւիրութիւնը հեշտացնում:

Ռուս եկեղեցու պաշտօնական թերթի եկեղեցիների միութեան վերաբերեալ այս ընդարձակ յօդուածի համառօտ վերաբրտադրութիւնից թնդ պարզուի Արարատի ընթերցողների համար, թէ ինչպիսի հայեացք ունի ռուսաց պաշտօնական եկեղեցին այդ խնդրի անցեալ պատմութեան և ներկայ դրութեան վրայ: Օրինակ, միթէ ճիշտ է, որ յունական օրթոդոքս եկեղեցին միշտ եկեղե-

1) Տես Արարատ № 1. երես 32.

ցիւների միութեան խնդրին մօտեցել է մաքուր կրօնական շարժառիթներով: Թող պատմութիւնը խօսի: Ի՞նչն էր դրդում Հերակլ, Կոստանդին և Յուստինիանոս II. կայսրներին միացնել փորձելու հայոց եկեղեցին և միւս մօնօթիւ ջիւա համարուած եկեղեցիները յունական եկեղեցու հետ. նրանք զլիաւորապէս քաղաքական հաշիւներով չէին առաջնորդւում. ի՞նչ է սովորեցնում մեզ Բագրատունեաց թագաւորութեան անկման շրջանի պատմութիւնը, երբ յոյները իրենք նպաստեցին հայերի անկախութեան կորսուելուն և այդ համարեցին հայերի յամառ հերետիկոսութեան հետեանք և ապա ամեն կերպ աշխատեցին հայ եկեղեցին ձուլել յոյն եկեղեցու հետ: Այժմ դառնանք յոյն և լատին եկեղեցիներին միութեան փորձերի դրդապատճառներին. յայտնի է որ պաշտօնապէս այդ երկու եկեղեցիները միմեանցից անջատուեցին 1054-ին: Այդ թուից սկսած մինչև մեր օրերը յառաջ եկած միարարական բոլոր փորձերի հիմքում կարելի է դանել քաղաքական և իշխանասիրական միտում: Երբ Մելջուք թուրքերը Հայաստանը գրաւելուց յետոյ յառաջացան մինչև Եգէան ծովը, յունական Ալէքսիս կայսրը զիմեց Արսելքի օգնութեանը, բայց ի հարկէ օգնութեան եկողները աւելի շուտ իրենցից օգնութիւն սպասողին կիկելադէին իրանց պահանջները, որոնք կարծես իրազործուեցին 1204-ին, երբ Կ. Պօլսում հիմնուեց լատին-կաթոլիկ կայսրութիւնը: Նիկիայի յոյն կայսրները իրենց կորցրած սահմանները նորից ձեռք բերելու յոյսով ուղեցին պապերի բարեհաճութիւնը վաստակել՝ յուզելով եկեղեցու միացման խնդիրը: Միքայէլ Պալէօլօգը, որը կարողացաւ 1261-ին Կ. Պօլիսն առնել Գենուացիների օգնութեամբ, նոր թափով այդ խնդիրը առաջ տարաւ. Լիօնի ժողովում (1274) նորա ղեսպանները բնդունելով Հռովմի պահանջները՝ միութիւն առաջ բերին, այդպիսով յոյս ունենալով արեւմուտքից քաղաքական օգնութիւն ստանալու, բայց երբ այդ յոյսը չիրականացաւ, կայսրը յետ քաշուեց այդ խնդրից և Մարտին Գալաթի 1281-ին բանադրեց կայսրին: Միարարական փորձերը յոյն եկեղե-

1288-84



ցու կողմից բազմանում էին այն չափով, ինչ չափով որ յոյն եկեղեցին և կայսրութիւնը զնալով օսմանցի թուրքերից աւելի նեղւում էին: Անդրոնիկոս III Պալէօլօգը զեսպաններ ուղարկեց Ավինիօնում նստող Բենեդիկտ XII պապի մօտ միութիւն առաջ բերելու և այդ ձևով քաղաքական օգնութիւն ստանալու յուսով, բայց ապարդիւն: Յովհաննէս VII Պալէօլօգ օսմանցի թուրքերից ճնշուած՝ իւր խղճուկ դրութեան մի դարման տանելու համար՝ 1438-ին դարնան 700 հոգով նիկիոյ Պեսարիոն արքեպիսկոպոսի և Քիւի Իսիտոր եպիսկոպոսի և այլոց ուղեկցութեամբ Ֆերարա դնաց Եւգեն VI պապի դռմաբաժ այս տեղի համաժողովին անձամբ ներկայ լինելու և միութիւն առաջ բերելու համար: Եւ երբ կայսրը խոստում առաւ, որ լատինները կօզնեն իրեն ընդդէմ օսմանցիների. այն ժամանակ պատրաստակամ զանուեցին՝ թէ ինքը և թէ իր հետ եկողները Հռովմի բոլոր պահանջներին տեղի տալու: Ընդունուեցին Պապի գերագահութիւնը, «Եւ Որդւոյ» յաւելումը հաւատամքի մէջ, քաւարանի հաւատքը և այլն: 1539-ի յուլիսի 6-ին կարգացւում է միութեան պայմանագիր յոյն և լատին լեզուներով և ստորագրւում. Կ. պատրիարքը Գրիգոր III-ն էլ ընդունում է. 1452 ղեկտ. 14 Այասօֆիա եկեղեցում կայսեր ներկայութեան տօնւում է այդ միութիւնը. բայց խոստացւած քաղաքական օգնութիւնը չհասաւ. Կ. Պօլիսն ընկաւ թուրքերի ձեռքը 1453. մայիսի 23-ին՝ որով միութեան խնդիրը թաղուեց: Ի՞նչ է օտոբեցնում մեզ եկեղեցիների միութեան փորձերի այս պատմութիւնը. այն՝ որ քանի յունական կայսրութիւնը ուժեղ էր, ձգնում էր բռնի ոյժով արեւելեան մանր եկեղեցիները, հայերի, ասորիների, զրաթիների և այլն միացնել իւր եկեղեցու հետ՝ միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չդնելով: Այն ժամանակ այդ մանր եկեղեցիներն էին սէր, եղբայրութիւն, համբերատարութիւն հայցում բիւզանդական եկեղեցուց և պետութիւնից. բայց երբ եկաւ ժամանակ, երբ յոյն եկեղեցին էլ ընկաւ այն դրութեան մէջ, որի մէջ գտնւում էին դարերէ ի վեր

արևելեան մանր եկեղեցիները, օգնութիւն, սէր, եղբայրութիւն, համբերատարութիւն ազերսեց Արևմուտքում տիրապետող իւր քոյր եկեղեցուց և նրանից ստացաւ այն պատասխանը, ինչ պատասխան որ ինքը տուել էր աւելի առաջ իւր օգնութեան կարօտ արևելեան եկեղեցիներին: Եթէ միութիւնը գլուխ չի եկել, չնայած այդքան բազմաթիւ փորձերին, զրանում մեղաւոր չէ, ինչպէս թիւրիմացութեամբ Церк. Вѣст. է բացատրում, կաթողիկ եկեղեցու ազրեսիւ քաղաքականութիւնը, այլ այդ եկեղեցիների միութեան հարցի սխալ ըմբռնումը թէ կաթողիկներին և թէ օրթոտոքսների կողմից: Եկեղեցիների միանալը, մի ընդհանրական առաքելական եկեղեցի կազմելը այնպէս, ինչպէս երկուստեք պատկերացնում են, հակասում է պատմութեան օրէնքներին և բնական զարգացման տեսութեան: Եթէ քրիստոնէութիւնը իւր գոյութեան առաջին հինգ դարերում ներկայանում էր համեմատաբար իբր մի ընդհանրական ամբողջութիւն, այդ նրանից էր, որ հին հռոմէական կայսրութիւնը ստեղծել էր որոշ չափի մի միօրինակ քաղաքակրթութիւն իւր տիրապետութեան բոլոր սահմաններում: Ժամանակի ընթացքում այդ կայսրութիւնը խախտուեց: Արևմուտքում և Արևելքում հանդէս եկան նոր նոր ազգեր և նոր նոր աստիճանի և որակի քաղաքակրթութիւններ, միլիթ հնարաւոր էր պահպանել ընդ. եկեղեցին իւր միապաղաղ միօրինակութեամբ այս նոր ազգերի շրջանում: Քրիստոնէութեան կորիզը կազմող յաւիտենական ճշմարտութիւնները այս տարբեր ազգերի և քաղաքակրթութիւնների շրջանում պիտի ըմբռնուէին և արտայայտուէին մի քիչ տարբեր ձևով՝ համաձայն այդ ազգերի հոգեբանութեան և քաղաքակրթութեան: Անկարելի էր պահանջել, որ Սպանիացին և Հայը, Ռուսն ու Արաբը կամ Մնգլիացին և Ասորին քրիստոնէութիւնը միատեսակ ըմբռնէին և արտայայտէին:

Ազգային եկեղեցու և գիտութեան տեսակէտով եկեղեցիների տարբերութիւնը ու բաժանումը հասկանալի է. զրանում ոչ ոք մեղաւոր չէ, և այն ձևի միութիւն, ինչ-

պէս կաթոլիկ և Օրթոդոքս եկեղեցիներն են երազում, անհնարին է այնքան ժամանակ, որքան ժամանակ որ Ռուսի և Իտալացու, Գերմանացու և Հայի քաղաքակրթական և բնական պայմանները տարբեր կլինին: Եթէ այս հայեցակէտով զինուեն եկեղեցիները՝ այն ժամանակ կվերանայ եկեղեցիների դէպի միմիանց տաժաժ նախանձն ու ատելութիւնը և Нерк. Вѣст.-ի այդ յօդուածի հեղինակը այն զրգուռած սճով չի յարձակուի կաթոլիկ և բողոքական եկեղեցիների վրայ:

Յիրաւի, եթէ քննենք, թէ ի՞նչու այդ թերթը այդպէս խիստ կերպով է յարձակուում կաթոլիկ և բողոքական եկեղեցիների վրայ, իսկ դէպի հին կաթոլիկ ու անգլիական եկեղեցին այդքան սիրալիր է, պատճառը խսկոյն կգտնենք: Կաթոլիկ Հռովմը և բողոքականութիւնը ուղղափառութեան երկիւղ են ազդում իրենց մեծութեամբ, կազմակերպութեամբ, գիտական պատրաստութեամբ, ոյժով և տարածութեամբ ընդունակութեամբ, այն ինչ անգլիական և հին կաթոլիկ փոքրիկ եկեղեցիները աւելի ազգային և տեղական բնաւորութիւն ունին. նրանք չեն տարածւում և դրանով երկիւղ չեն ազդում ուղղափառ եկեղեցուն. այո՛, մինչև իսկ օրթոդոքս եկեղեցու ակտիւական են զրգուռում: Բայց դուր յոյսեր, ոչ անգլիական եկեղեցին պրաւօսլաւ կղաւնայ, ոչ պրաւօսլաւը անգլիական, և միթէ՞ ցանկալի է այդպիսի միութիւն. բնաւ երբէք: Պէտք է թողնել, որ իւրաքանչիւր ազգ կամ եկեղեցի իւր ինքնուրոյն գոյնով ու հոտով հանդէս գայ քրիստոնէական ընդ. եկեղեցու ծաղկեփունջի մէջ:

Այս տեսակէտով կաթոլիկ և բողոքական եկեղեցիները միասնեւանական գործունէութիւնը միւս քրիստոնէայ եկեղեցիների սահմաններում պէտք է անվերապահ կերպով դատապարտել, մանաւանդ որ յաճախ այդ կատարւում է պրօպօլիւսաներ ձեռք բերելու յոյսով և միջոցների մէջ խտրութիւն չգնելով: Կաթոլիկ, բողոքական և պրաւօսլաւ եկեղեցիների արաաքին միասնեւ ոչ մի տարբերութիւն չալիտի ունենայ ներքին միասնեւ, դրանք երկուսն էլ պիտի

ունենան զուտ բարեգործական բնաւորութիւն, առանց ազգի, դաւանանքի և սեռի խտրութեան, իսկ բարի գործը հիմնուած սիրոյ վրայ՝ չի կարող արգելուել, չի կարող երկիւղալի դառնալ:

Ամփոփելով մեր խօսքը վերոյիշեալ յօդուածում յայտնուած մտքերի վերաբերմամբ՝ մենք գալիս ենք հետեւեալ եզրակացութեան. ա) ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների ձեռնարկած միութեան փորձերը կրել ու կրում են նոյն բնաւորութիւնը. նրանք փորձում են գերիշխող լինել եկեղեցական—վարչական տեսակէտից իրենց մրցակից եկեղեցու վերաբերմամբ. ոչ մի կողմից չի նկատուում մաքուր կրօնական դրդապատճառ: բ) եկեղեցիների միութեան գաղափարի իդէական կողմը ունի անբնական ելակէտ: Պատմական զարգացման գիտակցութեան բացակայութիւնն է պատճառ, որ եկեղեցիների միութեան փորձերի ապարդիւնութիւնը վերագրուում է այս կամ այն կողմի փառասիրութեանը: Եզրակացութեան այս բոլոր կէտերը ունին այն միակ հիմքը, որ խիղճն ազաւ է իսկ կրօնը խղճի գործ:

Մ. ԽԱՍՏԻԿԵԱՆ

